«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2021

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՆՅՈՒԹԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՌԱՐԿԱ	ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
ՀԵՂԻՆԱԿ	ՆՈՐՎԱՐԴ ԽԱՉՈՒՄՅԱՆ
ՄԱՐԶ	ՍՅՈՒՆԻՔ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՇԱՂԱԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՆԱԽԱԲԱՆ

Տեխնոլոգիան գործընթաց է մարդու կողմից օգտակար ծառայությունների և ապրանքների ստեղծման համար: Տեխնոլոգիայի ուսումնասիրումը սովորեցնում է մտածել, վերլուծել, առաջադրել նոր մտահղացումներ, ստեղծագործաբար մոտենալ բոլոր առաջադրանքների կատարմանը, գնահատել գեղեցիկը:

Յուրաքանչյուրս շրջապատված ենք գեղեցիկի բազմազան բարդ ու դյութիչ աշխհարով:

Հնարավոր չէ գտնել մի մարդու, որն անտարբեր լինի գեղեցիկի նկատմամբ: Յուրաքանչյուր մարդ ունի ստեղծագործաբար աշխատելու հնարավորություն:

Ներկա ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրներից է կրթության որակի բարձրացումը, և մեծ նշանակություն է տրվում դրա իրականացմանը: Այսինքմ մեծ պահանջ է դարձել ուսուցման նոր մեթոդների կիրառումը: Այդ գործընթացում առավել արդյունավետ է համակարգչի օգտագործումը նոր նյութի հաղորդման ժամանակ՝ գործիքների և սարքավորումների,նյութերի կառուցվածքի և օգտագործման ձևերի , աշխատանքային հնարների մասին բացատրությունը զուգակցելու տեսողական նյութի ցուցադրումով:

Նպատակ- Բացահայտել էլեկտրոնային գրատախտակի օգտագործման արդյունավետությունը կրթության որակի բարձրացման գործում:

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԽԻԿ ՄԵԹՈԴՈՎ

Դասարան 6-րդ

Առարկա-Տեղնոլոգիա

Թեմա –Նյութի գեղարվեստական մշակումը հայկական ասեղնագործության մեջ

Դասի նպատակը--- Ծանոթացնել ասեղնագործության տեսակներին, տարածաշրջանային Առանձնահատկություններին:

Դասի խնդիրները—Ասեղնագործության մասին գիտելիքների շնորհիվ սովորեցնել զարդանախշերը գործվածքի վրա տեղափոխելու տեխնիկան:

Կրթական—1. Հաղորդել գիտելիքներ ասեղնագործության տեսակների մասին:

2. Ծանոթացնել ասեղնագործելու համար կիրառվող գործիքներին և Հարմարանքներին:

3. Ձևավորել ասեղնագործելու կարողությունը:

4. Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները:

Զարգացնող—Զարգացնել տարածական պատկերացումներ և գեղագիտական ճաշակ:

Դաստիարակչական—Դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ:

Դասի ավարտին սովորողը պետք է՝

.Իմանա- ասեղնագործության տեսակները, գործիքները, տարածաշրջանային առանձնահատկությունները,

.Կարողանա-պատկերը, զարդանախշը փոխադրել գործվածքի վրա,
.Տիրապետի—ասեղնագործության համար օգտագործվող գործիքներին,
Գիտակցի –ասեղնագործության կարևորությունը հայկական մշակույթի մեջ:
Անհրաժեշտ սարքավորումներ—ասեղ, մկրատ օղակ և այլն
ՈՒսուցչի օժանդակ ռեսուրսներ—դասագիրք, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ:

Դասի ընթացքը՝

Խթանում--<<Մտագրոհ>>
Իմաստի ընկալում—Սահիկաշարի միջոցով
Կշռադատում—Գործնական աշխատանք. պարզ զարդանախշերի ասեղնագործություն
Գնահատում—

Դասի արդյունավետությունը պայմանավորված է վերը նշված բաղադրիչների ճշգրիտ կիրառումից, նպատակահարմար համադրումից:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայ ժողովուրդը հին դարերից մինչև օրս փայլում է ձեռքի աշխատանքով: Եկար դարերի Ընթացքում անցնելով աննկարագրելի դժվարությունների, ողբերգական իրավիճակների միջով, հայ ժողովուրդը ոչ միայն պահպանել է, այլև զարգացրել է ժողովրդական ստեղծագործությունների ավանդույթը իր վարպետ սերունդների միջոցով:
Ասեղնագործական բազմերանգ ու բարձրարվեստ գործերը հիմնականում ստեղծվել են կանանց շնորհիվ: Փոքրիկ պատառիկներից մինչև ամենածավալուն զարդարանքները հագեցած են հայ ասեղնագործ վարպետների շնորհքով և իմաստուն հմտությամբ:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ



ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների ընդունակությունների ր շնորհի ակունքները նրանց մատների ծայրերին է:

Մատներից <<պատկերավոր ասած>>՝ հոսում են բարալիկ գետեր, որոնք սնուցում են ստեղծագործական միտքը: Որքան մեծ են մանկական ձեռքի հմտությունները, այնքան խելացի է երեխան: Վ.Ա. Սուխումլինսկի

Ասեղնագործությունը դեկորատիվ- կիրառական արվեստի տեսակ է՝ հագուստը, կենցաղային առարկաները զարդարելու, դեկորատիվ պաննոներ ստեղծելու արհեստ:

Ասեղնագործ իրերն օգտագործվում են որպես հագուստի զարդարանք, ծածկոց, բնակարանի հարդարանքի միջոցայլն:

Ասեղնագործ աշխատանքներն ստեղծվում են ասեղով, երբեմն՝ հելունով :

Ասեղնագործությունը լինում է 2 տեսակ՝ կտորը կտորի վրա դրվող՝ վերադիր (օգտագործում են մորթի, թաղիք, ասեղնագործող մեքենայով՝ բամբակե, վուշե, մետաքսե, բրդե թելերով, օգտագործվում են նաև ուլունքներ, մարգարիտ, ոսկեթելեր, դրամներ և այլն: Բրդե թելն առաջինն օգտագործել են Չինաստանում, մետաքսե թելը՝ Պարսկաստանում:

Ասեղնագործությունը հնագույն ծագում ունի: Սկզբում օգտագործել են բույսի փշերից կամ ձկան ոսկրերից, ապա՝ փայտից, փղոսկրից, մետաղից սարքած ասեղներ: Վաղ անցյալում ասեղնագործությամբ զբաղվել են ասորեստանցիները, եգիպտացիները, չինացիները, պարսիկները, հրեաները, հույները և ուրիշներ, իսկ առավել հայտնի կենտրոնը Բաբելոնն էր:

Ամենահին ասեղնագործ նմուշների մասին վկայում են ասուրա-բաբելական արձանների, եգիպտական քանդակների, որմնանկարների, հունական սափորանկարների վրա պատկերված հագուստների զարդարանքները, հնագիտական պեղումներով հայտնաբերված ասեղնագործ պատառիկները:

Մինչև XII դարը ասեղնագործում էին ծանր կտորներ՝ հաստ թելով, հետագայում աշխատանքները դարձել են ավելի նուրբ և բազմագույն: Չինաստանին բնորոշ ասեղնագործ պաննոները, հատկապես «սյուխուա»-ները («ասեղով գեղանկարչություն») ոճով մոտ են մետաքսի վրա տուշով կատարված չինական բնանկարներին: Ասեղնագործությունը տարածվել և զարգացել է Գերմանիայում, Անգլիայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Հին հայկական ասեղնագործության մասին վկայում են մատենագիրներ Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին և ուրիշներ:

Հայկական ասեղնագործությունը ժողովրդական ստեղծագործության հին և հարուստ բնագավառներից մեկն է: Դա ծագել է նախնադարյան հասարակությունում, երբ մարդիկ սկսել են օգտագործել ասեղի նախնական տեսակները և ապա ասեղը: Առօրյա աշխատանքների ընթացքում մարդիկ աստիճանաբար սովորել են նաև այդ գործիքների օգնությամբ կատարել զարդեր՝ հիմք դնելով ասեղնագործության արվեստին:

Պեղումների շնորհիվ հայտնաբերված զարդարված ասեղնագործ հագուստի տեսակները և նաև այլ իրեր վկայում են,որ ասեղնագործությունը հին աշխարհի սիրած զբաղմունքներից մեկն է եղել: Շատ հին ժամանակներից ասեղնագործությունը եղել է նաև հայ ժողովրդի ու հատկապես հայ կնոջ սիրած զբաղմունքներից մեկը: Հայ պատմիչների երկերում պահպանված են վկայություններ հայկական զարգած ասեղնագործության մասին:

Միջին դարերից պահպանվել ու մեզ են հասել ոչ միայն հիշատակություններ, այլև ասեղնագործության որոշ նմուշներ:Մատենադարանում պահպանվել են հին ասեղնագործության փոքրաթիվ, բայց շատ ուշագրավ նմուշներ: Դրանց մի մասը, որպես կազմի պարագա փակցված են

կազմի ներքին կողմի վրա, բայց կան նաև ձեռագրեր փաթաթելու համար պատրաստված ասեղնագործ քսակներ կամ շապիկներ:
Միջնադարից պահպանվել են ասեղնագործ պատառիկներ. Անիի պեղումներով հայտնաբերվել են XII– XIII դարերի զգեստների, ծածկոցների մնացորդներ, ինչպես և ձեռագրերի կազմաստառներ, XV դարից՝ եկեղեցական զարդարանքներ և այլն: Հայկական ասեղնագործությունը զարգացել է 3հիմնական ուղղություններով՝ ժողովրդական (գեղջկական տարազ), քաղաքային (առևտրաարհեստավորական կենցաղ) և եկեղեցական:

Բազմաբովանդակ, բազմաճյուղ ասեղնագործ արվեստը արտահայտչական հարուստ հնարավորություններ ունի: Գործվածքների տարբեր տեսակների վրա կատարված ասեղնակարերը ստեղծում են բազմատեսակ բանվածքներ: Հարուստ և ուշագրավ են զարդանկարները:

Դարերի խորքից եկող նախշերին միացել են ժողովրդի նոր ստեղծած զարդաձևերը, որոնք բազմերանգ թելերով ավելի խոսուն ու շքեղ են դարձնում ասեղնագործությունը: Երանգների առատությունը, գունային մեղմությունն ու խորությունը հատկանշական են հայկական ձեռագործությանը:

Բազմաբովանդակ, բազմաճյուղ ասեղնագործ արվեստը արտահայտչական հարուստ հնարավորություններ ունի: Գործվածքների տարբեր տեսակների վրա կատարված ասեղնակարերը ստեղծում են բազմատեսակ բանվածքներ: Հարուստ և ուշագրավ են զարդանկարները: Երանգների առատությունը, գունային մեղմությունն ու խորությունը հատկանշական են հայկական ձեռագործությանը:

Հայկական ասեղնագործ արվեստն իր ամբողջ հարստությամբ և պատկերագրության ներքին բովանդակությամբ նմանություն ունի ճարտարապետական կառույցների, խաչքարերի, գերեզմանաքարերի զարդաքանդակների, ինչպես նաև որմնանկարչության և մանրանկարչության զարդանկարային կառուցվածքի և գունային լուծման հետ:

Ասեղնագործ զարդարանքների որոշ տեսակներ յուրովի մոտենում են ոսկերչության արծաթագործության արվեստին, մասնավորապես զուգաթելի տեխնիկայի կիրառմամբ (ֆիլիգրան, թելկար): Հնուց կապեր ունենալով ուրարտական, ասորեստանյան, բաբելական, եգիպտական, իրանական, հնդկական և այլ մշակույթների հետ հայ ժողովուրդը զարգացրել է իր մշակույթը՝ աչքի ընկնելով նաև ասեղնագործությամբ:

Միջնադարյան մի շարք քաղաքներ՝ ինչպիսիք են Դվինը, Անին, Տիգրանակերտը, Վանը, Երզնկան, Կարինը, Կիլիկյան քաղաքները հռչակված են եղել իրենց գեղարվեստական բարձրորակ արտադրանքով:

Ազգային միասնական ոճի, ասեղնակարերի կատարման տեսակների, 7զարդանկարների ձևի ու բովանդակության միաձույլ ամբողջականության հետ գոյություն են ունեցել նաև տարբեր բնակավայրերի, քաղաքների առանձնահատուկ ասեղնագործ զարդարանքներ:

Ուշագրավ են նաև հայկական եկեղացական հագուստի և վարագույրների ասեղնագործություններն իրենց բարդ պատկերագրությամբ և ընծայական հիշատակություններով: Տարբեր ժամանակներում մշակված տառատեսակները և դրանց ասեղնագործական բազմազան եղանակները հայ գրերի պատմության զարգացման մեջ մի ինքնուրույն էջ են կազմում:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ժամանակին Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում, Տրապիզոնում լույս են տեսել ասեղնագործ հատուկ տետրեր, ուր հայկական այբուբենը ներկայացված է գեղարվեստական բազմազան ձևավորումներով:

Հայկական ասեղնագործ արվեստն իր ամբողջ հարստությամբ և պատկերագրության ներքին բովանդակությամբ նմանություն ունի ճարտարապետական կառույցների, խաչքարերի, գերեզմանաքարերի զարդաքանդակների, ինչպես նաև որմնանկարչութ-յան և մանրանկարչության զարդանկարային կառուցվածքի և գունային լուծման հետ:

Ասեղնագործ զարդարանքների որոշ տեսակներ յուրովի մոտենում են ոսկերչության արծաթագործության արվեստին, մասնավորապես զուգաթելի տեխնիկայի կիրառմամբ (ֆիլիգրան, թելկար): Հնուց կապեր ունենալով ուրարտական, ասորեստանյան, բաբելական, եգիպտական, իրանական, հնդկական և այլ մշակույթների հետ հայ ժողովուրդը զարգացրել է իր մշակույթը՝ աչքի ընկնելով նաև ասեղնագործությամբ:

Միջնադարյան մի շարք քաղաքներ՝ ինչպիսիք են Դվինը, Անին, Տիգրանակերտը, Վանը, Երզնկան, Կարինը, Կիլիկյան քաղաքները հռչակված են եղել իրենց գեղարվեստական բարձրորակ արտադրանքով:

Ազգային միասնական ոճի, ասեղնակարերի կատարման տեսակների, զարդանկարների ձևի ու բովանդակության միաձույլ ամբողջականության հետ գոյություն են ունեցել նաև տարբեր բնակավայրերի, քաղաքների առանձնահատուկ ասեղնագործ զարդարանքներ:
Ուշագրավ են նաև հայկական եկեղեցական հագուստի և վարագույրների ասեղնագործություններն իրենց բարդ պատկերագրությամբ և ընծայական հիշատակություններով:

Ասեղնագործությունը տարածված էր Հայաստանի բոլոր գավառներում և հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում, հատկապես Վան-Վասպուրականում, Շիրակ-Կարինում, Սյունիք-Արցախում, Արարատյան երկրում, Կիլիկիայում, Կեսարիայում, Թիֆլիսում և Կոստանդնուպոլսում:
Հայկական ասեղնագործության հրաշալի նմուշներ են ստեղծվել Ղրիմում, ԱՄՆ-ում և այլուր:
Տարածված զարդակարերից են շարակարը (շուլալակար), շյուղակարը (ցողունակար), հարթակարը (լիցք, ուռուցիկ, գծային և այլն), խաչկարը, կողքակարը, թելքաշը և այլն:

XIX դարի 2-րդ կեսից տարբեր երկրներում բացվել են ասեղնագործական աշխատանքներ արտադրող ձեռնարկություններ: Չնայած մեքենական ասեղնագործությունը որոշ չափով ազդել է նաև հայկական ասեղնագործության վրա, այդուհանդերձ, Հայաստանում շարունակվում են հայկական ասեղնագործության ավանդույթները: Գործում են այդ արհեստն ուսուցանող տարբեր խմբակներ, հրատարակվում են ալբոմներ, կազմակերպվում ցուցահանդեսներ և այլն:

Մարաշին բնորոշ ասեղնագործ աշխատանքները բաժանվում են 2 խմբի: Առաջինը՝ հարթակարն է, որը ժողովրդի մոտ ընդհանրացված է աթլասլամա անվանումով, իսկ երկրորդը գաղտնակարն է՝ հյուսված կար, որ կոչվում է նաեւ իրկա: Մարաշին հատուկ է նաեւ հյուսված կարը, որը կարծես հյուսված նախշ լինի՝ դրված կերպասի վրա, ոչ թե իր հետ է աշխատված:

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի խոսքով՝ «Մարաշի ասեղնագործություն»-ը հայոց ժառանգության ուսումնասիրմանն ու հանրահռչակմանը:

նվիրված կարևոր նախաձեռնության արդյունք է: «Հայագիտությունը դեռևս հսկայական անելիք ունի հայոց մշակութային ժառանգության տարբեր ոլորտներին վերաբերող նյութերի հավաքման, դրանց ուսումնասիրության ու հանրահռչակման գործում:

Այդ ժառանգությունը պահանջում է նպատակասլաց և ծրագրավորված աշխատանք: «Այդ ձեռնարկության մի հսկայական հատված ամբարվել և ամբարվում է սփյուռքում և բնական է, որ սփյուռքում պահպանված ու մեզ հասած նմանատիպ նյութերի հավաքը, ուսումնասիրությունը, հանրությանը ներկայացնելը կարևորագույն գործ պետք է համարենք և ամեն ինչ անենք՝ դրանք կյանքի կոչելու համար»,- նշեց Պ. Ավետիսյանը՝ շեշտելով, որ «Մարաշի ասեղնագործություն» գիրքը այդ խորհուրդն ունի և ասվածի գործնական լուծման շատ ուսանելի մի օրինակ է:

Նա նաև նշեց, որ «Ասեղնագործություն» գիրքը երախտագիտության տուրք է այն մարդկանց հիշատակին, ովքեր Եղեռնից փրկված եւ տնազուրկ հայրենակիցների համար հագուստի միջոցներ որոնելիս, ստեղծել են ձեռագործական արհեստանոցներ, գործատներ, որպեսզի հարյուրավոր մարդիկ կարողանան նոր պայմաններում հարմարվել եւ աշխատանք ունենալ:

Հայտնի են նաև առանձին քաղաքների անուններով հիշատակված ասեղնագործություններ՝ Վանի, Մարաշի, Այնթապի, Կարինի, Տարսոնի և այլն:

Ասեղնակարերի տեսակները

Հայկական ասեղնագործ արվեստի մեջ հանդիպում են երկրաչափական, բուսական, կենդանական, ճարտարապետական, ինչպես նաև երկնային մարմինների ֆանտաստիկ ձևերի պարզ ու բարդ բովանդակություն ունեցող զարդանկարներ, պատկերագրություններ:

Խաչքարերի, գորգերի և ասեղնագործ զարդարանքների նմանությունները հաճախ ընդգրկում են ամբողջ մակերեսի զարդանկարի կառուցվածքը:

Եկեղեցական ասեղնագործությունները թե՝ պատկերագրությամբ և թե՝ գունային լուծմամբ մեծ նմանություն ունեն մանրանկարչության հետ: Պահպանելով հայ լուսավորչական կրոնի կանոնները, դրանք արտահայտում են միասնական առանձնահատուկ ոճ: Դարերի խորքից գալով, ասեղնագործական նախշերը մշակվել են և ստացել են կատարյալ ձևեր:

Բուսական նկարազարդումները երբեմն բնական ձևերով, երբեմն ոճավորված,երկրաչափական նախշերի հետ կրկնվելով ռիթմիկ շարքերով կենդանի շարժում են ստեղծում:Փոխելով նախշի գծերը, ժողովրդական ստեղծագործողը կառուցում է նույն զարդանկարի բազմաթիվ տարատեսակներ, ինչպիսին կարելի է տեսնել Սյունիքի, Վասպուրականի, Շիրակի, Կարինի, Կիլիկիայի ստեղծագործություններում:

Միասնություն տարբերության մեջ. սա է արվեստի հայկական ոճի կարևոր առանձ-նահատկությունը: Հայկական բնաշխարհի հարստությունը պատկերող ծաղիկ-տերևը, մրգերը, ոսկեհատ հասկերը, թռչունները կենսախինդ արևով են ողողում ամեն մի ասեղնագործ զարդարանք:

Հայկական ասեղնագործության մեջ հանդիպում են բազմաթիվ ասեղնակարեր: Դրանց մի մասը տարածված է եղել բոլոր հայաբնակ վայրերում, իսկ մյուս մասը տեղական բնույթ է կրել և զարգացել որոշ վայրերում միայն, ինչպես՝ Սասունի, Մուշի, Մարաշի, Վանի, Այնթապի ասեղնագործությունները:

Ասեղնակարերը, ասեղնաթելը հասարակ կարից մինչև բարդ զարդակարերը անցել են երկար ճանապարհ: Մեր նախնիները հասարակ շուլալ կարով սքանչելի զարդարանքներ են ստեղծել, ինչպես դա վկայում են Մատենադարանի ասեղնագործ պատառիկները:

Ուղիղ գծով անցնում են մի քանի տեսակ կարերը: Տարածված են շղթայակարը, օղակարը, շյուղակարը, վրակար-կողքակարը, խաչմերուկ կարը՝տարածված գեղջկական բանվածքներում, որի մի տեսակով միացնում են կտորի երկու մասերը:

Թելքաշերն այն կարերն են,երբ կտորից թելեր են քաշում հանում և տեղն այլ թելով նոր նախշեր անում:

Գոյություն ունեն հարթակարերի բազմաթիվ տեսակներ,օրինակ լիցք են կոչվում այն կարերը, որոնք կտորի մակերեսը լցնում են նախշերով:

Համրովի հարթակարի ժամանակ գործող թելը նախշի մակերեսը ծածկում է կտորի թելերի հաշվով:

Օրինակ Այնթապի ճերմակ ասեղնագործությունների մեջ նախշերը արվում են թելքաշով, համրովի ու գծային հարթակարով:

Մարաշի ասեղնագործության հարթակարը կոչվում է կոթ-ասեղ,երբ կարի կութերը անհավասար են և կտորի վրա նկարված նախշը ծածկում են գլխավորապես կտորի վրայից: Գործող թելով ասեղը կտորից միայն մի քանի թել է վերցնում: Ավելի բարդ է Մարաշի հյուսված կարը:

Վան-Վասպուրականի ասեղնագործությունը

Վանը հայկական կիրառական արվեստի միակ կենտրոններից է եղել, ուր պահպանվել են ժողովրդական ասեղնագործության հազարամյա ավանդույթներն ու վարպետությունը: Պատմիչների նկարագրոիթյուններից հայտնի է, որ գոհարներով, մարգարիտներով ասեղնագործված են եղել թագավորական և իշխանական հագուստները, ծածկոցները, թամբերը և այլ իրեր: Առհասարակ հայկական տարազի մեջ Վասպուրականի և Սասունի տղամարդկանց ասեղնագործ հագուստը ամենահինն է: 19-20-րդ դարերի Վան-Վասպուրականի ասեղնագործ դպրոցի առանձնահատկություններն արտահայտված են կանանց և տղամարդկանց տարազի և կենցաղային իրերի մեջ: Դրանք են ասեղնագործ շալն ու շալվարը, քյազախիկաբան, գդակ-արախչիները, գուլպաները, կանացի հագուստի սրտանոց-կրծկալը, գոգնոցմեզարը, լաչակչամբարը, ծամթելը, սփռոցը, սրբիչները, ծածկոցները, վարագույրները և այլ իրեր: Հին զարդանկարները, դրանց տեղադրման եղանակը,հատուկ ոլորքի բրդյա թելերի յոթ գույները բնորոշ են Վասպուրականի ասեղնագործությանը: Գույզգույն յոթ գույնի բրդյա թելերի

հյուսվածքները կատարվել են երկրաչափական զարդանկարների ու գույների հատուկ հաջորդականությամբ:

Վանը հարուստ է եղել ասեղնակարերով,օրինակ հայտնի Վանի կարը: Վանը հայտնի է եղել ժանյակի բոլոր տեսակներով:Նուրբ ու աննման ասեղնագործ ժանյակների մեջ կենդանի են մնացել հատկապես կոսմոգենիկ, բուսական և երկրաչափական հնագույն զարդամոտիվներ:

Շիրակ-Կարինի ասեղնագործությունը

Հայկական ասեղնագործության պահպանված աշխարհիկ բնույթի ամենահին նմուշները 10-13-րդ դարերից են: Դրանցից են Անի քաղաքի պեղումների արդյունքում հայտնաբերված Հոնենց Տիգրանի փոքրիկ բարեկամուհու դամբարանի մետաքսյա հագուստը, բանված ոսկեթելերով,ինչպես նաև գլխի ծածկոցները և այլ պատառիկներ: Հագուստի թևքի եզրերը և այլ մասերը ասեղնագործված են եղել ոսկեթել երկրաչափական բարդ զարդանկարներով,իսկ գլխի տակ փռված ճերմակ կտորի վրա կարմիր մետաքսյա թելի շարակարով վարպետորեն ասեղնագործված են ոճավորված մի շարք ճախրող թռչունների պատկերներ: Անի քաղաքի հին ձեռագործների գլուխգործոցն է սև նուրբ շղարշի վրա ոսկեթելով ասեղնագործված առյուծի և կորյունի պատկերը՝ ոճավորված ծառի հենքի վրա:Անիի ասեղնագործության մեջ գերակշռում են բարդ կարերը: Գաղթի տարիներին այս շրջանների բնակչության մեծ մասը փրկվելով տեղափոխվեց Անդրկովկաս, սակայն շարունակեց զբաղվել կիրառական արվեստի բազմաթիվ ճյուղերով,այդ թվում՝ասեղնագործությամբ: 19-րդ դարում Ալեքսանդրապոլում, Ախալցխայում և Թիֆլիսում գործում էին ոսկեթել ասեղնագործության մի շարք արհեստանոցներ:

Սյունիքի ասեղնագործությունը

Լեռնային Հայաստանի՝ Զանգեզուրի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի շրջաններն են ընդգրկված Սյունիքի ասեղնագործության դպրոցում: Ըստ հիշատակություն ասեղնագործությու բավական զարգացած է եղել Սյունիքում: Սյունիքից պահպանված ամենահին ասեղնագործ զարդարանքը 17-րդ դարի է: Սյունիքի հին ասեղնագործութ-յունները կատարվել են աշխատատար կարերով, մետաքսաթելերով, ոսկեթելով՝ ընդելուզված մարգարիտներով ու գոհարներով: 19-20-րդ դարերի ասեղնագործությունները նախորդ դարերի փայլը չունեն,սակայն հետաքրքրություն են ներկայացնում կարատեսակներով և զարդանկարներով: Սյունիքի կանացի հագուստը հարուստ չէ ասեղնագործությամբ: Ասեղնագործվել է վարտիքի եզրը՝ փողքակապը, շապիկի կուրծքը, ոսկե-թելով ասեղնագործվել են գլխի թագը, ճակատակապը: Սյունիքում նախշազարդ ասեղ-նագործվել են սրբիչները, վարագույրները, սփռոցները բազմատեսակ զարդանկարներով: Սյունիքում տարածված են հնուց եկող վերադիր կոչվող կարերը, երեխայի հաբգենգրպանները, պղինձբռնիչները, սանրամանները, ձիու ծածկոցները, բոխչաները: Հաճախ տուտկապ կոչվող բոխչաները կարված են եղել խճանկարային ասեղնագործությամբ նաև տարբեր գույնի կտորներից կազմված նախշերով: Տարածված են եղել կենաց ծառի, S տառաձևի, զանազան խաչաձևերի նկարներ: Մինչև 20-րդ դարի առաջին քառորդը դեռևս գոյություն ունեին գունավոր թելերից գործված ցանցաձև գդալամանները, որոնց հյուսվածքի հատման կետերը ասեղնագործվում էին:

Արարատյան ասեղնագործություն

Արարատյան ասեղնագործությունները շքեղ են,հյուսված ոսկեթելերով, փայլուններով, մարգարտով և ուլունքներով: 20-րդ դարի տեղական գեղջկական տարազը համարյա զուրկ է ասեղնագործությունից: Արարատյան ասեղնագործ դպրոցը ամենահարուստն է եկեղեցական զարդարանքներով:

Մարաշի ասեղնագործություն

Կիլիկյան Հայաստանի քաղաքներից Մարաշը՝ Գերմանիկը,իր հարակից բնակավայ-րերով նշանավոր է իր ասեղնագործությամբ: Երկու խմբի են բաժանվում Մարաշին բնորոշ ասեղնագործ աշխատանքները:
Առաջինը հարթակարն է (Զեյթունի կար կամ կոթ ասեղ, աթլասլամա), երկրորդը գաղտնակարն է, հյուսած կար որ կոչվում է նաև իրկա: Այս երկրորդն է, որ շատ բնորոշ է Մարաշին:
Ասեղնագործության համար նախատեսված կտորը կոչվել է էպէնէզէր:
Մարաշի ասեղնագործության հետաքրքիր տիպ են ներկայացնում հյուսած կարով ասեղնագործված ռոմբավոր գորգերն ու սփռոցները: Հատկապես ամենատպավորիչներից են հարթակար աթլասլամա գորգերը, որոնք ունեն գունային և կառուցվածքային մեծ արտահայտչականություն: Հարթակար սփռոցների դեպքում ևս հաճախ են հանդիպում կանոնավոր եզրանախշերը, կենտրոնում խոշոր արևի խորհրդանիշներ և վարդյակներ, չորս անկյուններում քառորդ կլոր, լուսնաձև մոտիվներ ու աստղիկներ:Զարդանախշերում հաճախ հանդիպող S նշանը չափազանց կարևոր է մշակութաբանական տեսակետից: Վիշապի կամ օձի ամենապարզ ձևը հիշեցնող այս նշանը Մարաշի ասեղնագործության մեջ օժտված է նաև թևիկներով: Վիշապը հանդես է գալիս որպես կենաց ծառի պահապան և նրանցով է ձևավորվում զարդապատկերները: Այսօր գերակշիռ մեծամասնությամբ «մարաշի գործը» իր երկու ձևերով կատարում են թավիշի լավագույն տեսակների վրա: Մինչդեռ Մարաշում մինչև 20-րդ դարի 40-50-ական թթ. աշխատել են տեղական,կամ ներմուծված բամբակե կտորի վրա,որը կոչվել է խասա: Բամբակե թելը, որով ասեղնագործվել է նախշը հարթակարի դեպքում եղել է փափուկ, թույլ ոլորքի,իսկ հյուսած կտորի դեպքում՝բարակ և լավ ոլորված: Պատահում են հարթակար աշխատանքներ,որոնց մեջ օգտագործվել են և բամբակե և բրդե թելեր: Ենթադրվում է, որ նաև օգտագործվել են մետաքսե և ոսկե թելեր: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ էր ընտրել հորինվածքը և գծագրել կտորի վրա: Գծողը հաճախ առանձին վարպետ էր և նրա գործիքը եղեգնյա գրիչն էր՝ շեղակի կտրված ծայրով: Նախօրոք պատրաստված փայտի վրա փորագրված կաղապարի միջոցով նախշը տպվում էր կերպասի վրա: Եթե նախատեսվում էր աշխատել մուգ գույնի մակերեսի վրա՝ կաղապարը թաթախվում էր օսլայի մեջ և ապա ամուր սեղմվում կերպասի երեսին: Բաց գույնի մակերեսի դեպքում՝ կաղապարը թաթախվում էր կապույտ լեղականերկի մեջ:

Ուրֆայի ասեղնագործություն

Հայաստանի ազգային պատկերասրահում են պահվում Ուրֆայի հայ կանանց ասեղնագործության երկու ալբոմ, որը հանձնվել է ուրֆայեցի Սաթենիկ Բեզիկյանի կողմից, ով ամուսնու հետ 1947թ. ներգաղթել էր Խորհրդային Հայաստան: Ուրֆա քաղաքը պատմության մեջ հայտնի է նաև Եդեսիա

անունով: Ուրֆայի զարդամոտիվներում գերիշխում են տերևազարդ ծաղիկներ, պարզեցված և ոճավորված: Գույները մեղմ են, հաճախ զուգակցված ոսկեթել բանվածքով: Ուրֆայի հայ կանանց ասեղնագործական արվեստը հետաքրքիր է նաև այն ընդհանրություններով, որ ունեն հայկական ավանդական կիրառական արվեստի այլ ճյուղերը:

Թբիլիսիի հայկական ասեղնագործությունը

Թբիլիսին հայ արվեստի համար շատ յուրահատուկ օջախ է, ուր հնուց ի վեր զարգացել են հայ ժողովրդի արհեստները: Հայ ասեղնագործուհիները պատրաստում էին կենցաղային զարդարանքներ՝ ճակատակալ,ժանյակ, կրծկալ և այլն: Մինչև 20-րդ դարի առաջին քառորդը հայկական կուսանոցի աղջիկները զբաղվում էին ոսկեթել, մետաքսաթել ասեղնագործությամբ: Առանձնապես գեղեցիկ և աշխատատար էին սպիտակ կտորի վրա սպիտակ թելով կատարված հարթակարերը և թելքաշը, նման Վանի, Այնթապի հայկական զարդարանքներին: Թբիլիսիում բնակվող հայ ասեղնագործուհիների թիվը չափազանց մեծ է եղել, որոնց մի մասը մասնագիտացած էր թանկարժեք սպիտակեղենի ասեղնագործության մեջ, մյուս մասը ճակատակապի, իսկ մի մասն էլ վարագույրների, սփռոցների, բարձերի և այլն: 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին Թբիլիսիի ասեղնագործությունը հասել էր բարձր կատարելության:Վանի-Վասպուրականի կարը տարածվել է Մերձավոր արևելքում, հասել մինչև Կիլիկիա, Կոստանդնուպոլիս, Ղրիմ և այլուր:Վանի կարը տեխնիկապես մնալով նույնը, շնորհիվ տարբեր թելերի գործածության,տարբեր տեսք է ընդունել: Վանի կարի ժամանակ կիրառվում է թեթև, երբեմն թափանցիկ կտավ, որպեսզի հնարավոր լինի հաշվել կտորի թելերը: Գործող թելը՝ գլխավորապես մետաքսաթելը, հորիզոնական ծածկում է կտորի երեք թելը, հետո թեք բարձրանում երեք թելի վրա, նորից երեք թել հորիզոնական,երեք թել թեք առաջացնելով ցանցկեն նախշ, որի վրայով հատուկ տեղերով ոսկեթել է անցնում: Ճկուն ոսկեթելը կարող է կարվել մետաքսաթելի նման, անցնելով կտորի երեսի և տակի մասով: Հաճախ կտորի հաստ լինելու դեպքում, ոսկեթելը դրվում է կտորի վրա և վուշյա, մետաքսյա թելերով ամուր կարվում կտորին: Ամենահին ոսկեթել ասեղնագործություններում ամրացնող թելի կարով, մանր կութերով վրայից տարբեր նախշեր են արվել:Վերադիր են կոչվում այն կարերը, երբ մեծ կտորների վրա այլ կտորներից նախշեր են արվում:Հայկական ասեղնագործությունները երբեմն հիշեցնում են նախշազարդ կերպասի կամ ոսկերչական նրբագույն գործեր:Հին կարերը հին նախշերի հետ միասին հայկական ազգային տարազի մեջ կենդանի մնացին մինչև 20-րդ դարի առաջին քառորդը: Ասեղնագործո ւմ են տարբեր տեսակի թելերով՝ բամբակե, վուշե, մետաքսե, բրդե և այլ թելերով: Թե ինչպես են թել մանում՝ կբացատրեմ ստորև:

Թելի մանումը

Թելի մանումը, տարբեր թելերի պարուրաձև ոլորման և շարվածքի գործընթաց է: Մանումը կատարվում է հիմնականում թելերն առավել ամուր և երկար դարձնելու նպատակով: Հայաստանում մանել սկսել են անհիշելի ժամանակներից, դա է վկայում պեղումների արդյունքում հայտնաբերված փայտյա, ոսկրե և կավե իլիկների առկայությունը:

Մանման եղանակները.

- Մազաթելի ոլորումը ձեռքի ափերի մեջ
- Մազաթելի մակերևութային ոլորում

- Մանում իլիկի օգնությամբ
- Մանում ճախարակի օգնությամբ
- Մանում մանածագործական սարքերի օգնությամբ

Մանումը զանազան մանածագործական գործիքների կիրառմամբ ներառում է երեք փուլեր. այդ թվում յուրաքանչյուր փուլ իր ընթացքն ունի.

- Մազաթելի զանգվածի պատրաստում և դրանից ժապավենի ստացում
- *Փխրեցում,* մամլած զանգվածը ծվեն-ծվեն են անում, մանրացնում, որպեսզի ավելի հեշտ միախառնվի և աղբից հեշ զատվի:
- *Միախառնում,* փխրունացված մազաթելի զանազան տեսակների իրար հետ ոլորման գործընթացը, որպեսզ ստանան այնպիսի թելեր, որպիսին հարկավոր է՝ առաձգական, ամուր, բարակ, հաստ և այլն:
- *Գզում,* ապահովում է հետագա փխրեցումն ու մազաթելի մաքրումը զանազան տեսակի աղբից:
- *Սանդերքում,* տեղի է ունենում առանձնացում: Ընդհանուր զանգվածից այլ մանր թելերիառանձնացման գործընթացն է: Հեռացնում են գործընթացից մնացած մանր մասերը և ձևավորում կամ ժապավեն կամ էլ հաստաթել:
- Նախամանում, աստիճանաբար ժապավենից դուրս են հանում հաստաթելը (նախաթել) և կծիկ պատրաստում ըստ համապատասխան ձևի և չափի:

Մանումը գրականության մեջ

Հայ գրականության մեջ հայտնի է Ղազարոս Աղայանի «Ճախարակ» բանաստեղծությունը, որի մեջ խոսվում է մանելու գործընթացի մասին.

Ճախարակ

Մանի՛ր, մանիր, ի՛մ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր։
Ձեթ եմ ածել ականջներրդ,
Նոր շինել եմ շրտըվիկ,
Դե՛հ, շու՛տ շարժիր լայն թևերդ,
Ոստեր շինիր սըրուլիկ։
Մանի՛ր, մանիր, ի՛մ ճախարակ,
Լիսեռնիկդ պտըտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլիկիդ վըրա փաթաթիր։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բոլոր ժամանակներում կրթությունը կարևոր տեղ ու դեր է ունեցել և հզոր դրական ազդեցություն ունի մարդկության, հասարակության համար:
Կրթությունը անձի, հասարակության,պետության շահերից բխող դաստիարակության գործընթաց է: Ժամանակները փոխվել են, ավելի է կատարելագործվել կրթության որակը: Հնարավոր չէ կյանքը պատկերացնել առանց կրթության:
Մեր դարաշրջանը համակարգչային տեխնոլոգիայի դարաշրջան է և պետք է արձագանքել երկրագնդում արագ փոփոխվող նոր մարտահրավերներին: Այդ իսկ պատճառով կրթության ոլորտի մասնագետների շրջանում որոշակիորեն բարձրացնել հմտությունը տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների/ ՏՀՏ/- ների ոլորտի նորամուծությունների և կրթական ոլորտում դրանց կիրառման նկատմամբ:
Եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է ժամանակակից ուսուցիչներին զինել տեխնոլոգիական գիտելիքներով, որոնք մեծ ազդեցություն կունենան կրթության գործընթացի արդյունավետության վրա և կլինեն հեշտ ու կիրառելի:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972
Ա. Պատրիկ, ՈՒրհայի ասեղնագործությունը, Երևան , 1985
Մարաշի ասեղնագործություն, Հալեպ, 2010
Ա. Մարաբյան, Ասեղնագործություն, Երևան 1985
Ս. Հովսեփյան, Տեխնոլոգիա 6 2020